ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

3 մարտի ուրբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

32
(2698)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱԹՈՌԻՆ ԿԱՌՉԱԾ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Այն, որ Հայաստանի իշխանությունները չունեն պատասխանատվություն ընտրողների առջեւ, ապացուցվել է բազմիցս: Հատկապես 44-օրյա պատերազմից հետո տեղի ունեցող գործընթացները ցույց տվեցին, որ նրանք նաեւ ատամներով կառչած են իշխանությանը, այնինչ եվրոպական երկրներում նախարարներն ու անգամ երկրի ղեկավարը կարող է հրաժարական տալ անգամ ամենափոքր սխալի դեպքում: Խոսենք փաստերով. Հունաստանի տրանսպորտի եւ ենթակառուցվածքների նախարար Կոստաս Կարամանլիսը հրաժարական է տվել երկաթուղային վթարից հետո, որի հետեւանքով բազմաթիվ զոհեր են եղել՝ հայտարարելով, որ իր վրա է վերցնում տեղի ունեցածի քաղաքական պատասխանատվությունը: Խոսքը Լարիսա քաղաքից ոչ հեռու՝ նույն գծի վրա գտնվող բեռնատար եւ մարդատար գնացքների ճակատային բախման մասին է: Հրշեջ ծառայության վերջին տվյալներով՝ զոհվել է 36 մարդ, վիրավորվել՝ 130-ը: Նկատենք՝ 44-օրյա պատերազմից հետո Հայաստանը ունեցել է գրեթե 5 հազար զոհ, 2022 թվականի սեպտեմբերյան երկօրյա իրադարձություններից հետո ունեցանք 201 զինծառայողի կորուստ: Ընդամենը վերջերս՝ հունվարի 19-ին, Ազատ գյուղի զորամասի հրդեհին էլ զոհ գնաց 15 զինծառայող: Այս եւ այլ ողբերգական դեպքերից հետո իշխանության վերջին օղակներում գտնվող անձինք եւ անձամբ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հրաժարական չի տվել եւ շարունակում է պաշտոնավարել, չնայած մշտապես հայտարարում է, թե կրում է այդ դեպքերի պատասխանատվությունն ու մեղավորությունը: «Եվ ես չեմ պատրաստվում փախչել պատասխանատվությունից, որովհետեւ ես պատասխանատու եմ ոչ միայն նրա համար, ինչը որ մինչ այս պահն է տեղի ունեցել, այլեւ նրա համար, ինչը որ սրանից հետո է տեղի ունենալու, ու ես այդ պատասխանատվությունը պատրաստվում եմ կրել մինչեւ այն պահը, երբ իշխանության տերը կորոշի, որ ես այդ պատասխանատվության հետ գործ չունեմ այլեւս»,- հավելեց Նիկոլ Փաշինյանը: Որքան էլ Փաշինյանը հայտարարի, թե ժողովուրդն է ընտրում, եւ այդ պատճառով չի հեռանում, փաստ է մեկ բան՝ նա կառչած է իր աթոռից:



Կառավարությունը բոլոր իրավաբանական անձանց, այդ թվում՝ ոչ առեւտրային կազմակերպություններին՝ ՊՈԱԿ-ներ, ՀՈԱԿ-ներ, անկախ կազմակերպաիրավական տեսակից, պարտավորեցրել էր 2023 թվականի հունվարի 1-ից իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնել: Հայտարարագիր ներկայացնելու վերջնաժամկետ նախապես սահմանված էր մինչեւ մարտի 1-ը, սակայն, հաշվի առնելով վերջին օրերին Իրավաբանական անձանց իրական շահառուների հայտարարագրման տեղեկատվական համակարգի գերծանրաբեռնվածության արդյունքում համակարգում առաջացող խնդիրները, որոշում կայացվեց մինչեւ ապրիլի 1-ը չհարուցել վարչական վարույթներ՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի չներկայացման հիմքով՝ դրանով իրավաբանական անձանց տալով հավելյալ ժամկետ պարտավորության կատարումն ապահովելու համար: Մինչեւ սահմանված ժամկետը պարտավորությունը չկատարելու դեպքում սկզբում կհայտարարվի նախազգուշացում, թերի կամ ոչ ճշգրիտ տեղեկատվության ներկայացման դեպքում՝ վարչական տուգանք՝ մինչեւ 100 հազար դրամի սահմաններում: Հայտարարագրով ստացված տվյալները բաց են լինելու, այսինքն՝ պետական ռեգիստրի գործակալության կայքում հասանելի են լինելու բոլոր իրավաբանական անձանց իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները: «Ժողովուրդ» օրաթերթին Արդարադատության նախարարությունից տեղեկացրել են, որ հունվարի 1-ից մինչեւ մարտի 2-ն ընկած ժամանակահատվածում շուրջ 30.000 հայտարարագիր ներկայացվել է պետական ռեգիստրի գործակալություն, օրական միջինում 1000-1500 լիազորագիր ներկայացվում է համակարգում գրանցելու նպատակով: Նախարարությունից հայտնում են նաեւ, որ 70.000 կազմակերպության կողմից դեռեւս հայտարարագրեր չեն ներկայացվել:

Գլխավոր դատախազը որոշել է խառնվել նաեւ համայնքների ղեկավարների գործերին: Բանն այն է, որ Ազգային ժողովը երեկ երկրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ ընդունեց ՀՀ կառավարության կողմից ներկայացված ««Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը: Իսկ ի՞նչ է լինելու այս նախագծերի ընդունման արդյունքում: Այսպիսով, օրենսդրական այս փոփոխության արդյունքում Դատախազությունը լիազորված կլինի համայնքային շահերի պաշտպանության հայց հարուցել դատարան, այդ թվում՝ վիճարկել համայնքների ղեկավարների այն հրամաններն ու որոշումները, որոնց արդյունքում օտարվել են համայնքային սեփականություն հանդիսացող զբոսայգիները, պուրակները, մանկապարտեզներն ու այլ անշարժ գույքերը: Հիմնավորման մեջ նշվում է, թե այդպես հնարավորություն կլինի ապօրինի կերպով արված որոշումների արդյունքում օտարված հաստատությունները վերադարձնել համայնքին: Այսպիսով, ստացվում է, որ Երեւանի քաղաքապետը եւ ապագա քաղաքապետը աշխատելու են համայնքի ղեկավար ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի մոտ: Մարզերում համայնքների ղեկավարներին կվերահսկեն մարզային դատախազները: Ասել է թե՝ տեղական ինքնակառավարում ասվածը հօդս է ցնդելու: Ինքնակառավարումը վերահսկվելու է դատախազության կողմից ամբողջությամբ: Հավելենք, որ ՀՀ բոլոր նախկին դատախազները փորձել են այս օրենքը անցկացնել, սակայն չի հաջողվել. միայն Վարդապետյանին հաջողվեց համայնքային շահը նույնացնել պետական շահի հետ եւ մխրճվել համայնքային կառավարման գործերի մեջ:

2022 թվականին ֆիզիկական անձինք բանկերի միջոցով արտերկրից Հայաստան են փոխանցել մոտ 5,2 մլրդ դոլարին համարժեք գումար: ArmLur.am-ը տեղեկացավ, որ, նախորդ՝ 2021թ.-ի փոխանցումների համեմատ, անցյալ տարի փոխանցումները 2,5 անգամ աճել են: Նախորդ տարի այդ ցուցանիշը կազմում էր ավելի քան 2,1 մլրդ դոլարին համարժեք գումար: Փոխանցումների առյուծի բաժինը՝ շուրջ 3,6 մլրդ դոլարին համարժեք գումարը, կատարվել է Ռուսաստանի Դաշնությունից: Այս թիվն էլ 2021-ի նկատմամբ աճել է ավելի քան 4 անգամ: 2021թ-ին ՌԴ-ից փոխանցվել էր ընդամենը շուրջ 866 մլն դոլարին համարժեք գումար: ՌԴ-ից փոխանցումներն ընդհանուր 69%-ն են կազմում: Մասնագետները կարծում են, որ տրանսֆերտների նման աճը հիմնականում պայմանավորված է ռուս-ուկրաինական հակամարտության հետեւանքով ՀՀ ժամանած օտարերկրացիների, մասնավորապես՝ ռուսաստանցիների թվով:

ԿՈՌՈՒՊՑԻԱ

ԱՐԳԵԼՎԱԾ ՉԷ ՎԱՐԿ ՎԵՐՑՆԵԼ

«Հետ» լրատվականը պարզել էր, որ ՊՆ նախարար Սուրեն Պապիկյանը վերջերս 168.000 դոլարով բնակարան է գնել: Ըստ լրատվամիջոցի՝ գործարքը տեղի է ունեցել 2022թ.-ի ամռանը: Բնակարանի ձեռք բերման գործարքը ֆինանսավորել է Ազգային Ժողովի պատգամավոր Խաչատուր Սուքիասյանի ընտանիքին պատկանող «Հայէկոնոմբանկ»-ը: Շենքը, որտեղ գտնվում է նախարարի բնակարանը, կառուցում է նախկին պատգամավոր, այժմ գործող իշխանությունների աջակցությունը վայելող Աշոտ Արսենյանի ընկերությունը: Հիշեցնենք, որ դրանից առաջ էլ արտգործնախարար Արարատ Միրզոյանն էր թանկարժեք առանձնատուն ձեռք բերել Քասախում:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ՔՊ խմբակցության անդամ Վիգեն Խաչատրյանը ասաց, որ խմբակցությունում քննարկել են այս հարցերը:

-Պարոն Խաչատրյան, Ձեր թիմակիցներից հետաքրքրվե՞լ եք՝ ինչ միջոցներով են թանկարժեք բնակարաններ ձեռք բերում. խմբակցությունում այս հարցերը քննարկման առարկա դառնու՞մ են:

-Երբ նման հարցեր են լինում, խմբակցությունում բարձրաձայնվում է, որ պետք է խորանալ այդ հարցի մեջ: Պաշտոնյաները հայտարարագրեր են ներկայացնում, մենք համապատասխան մարմիններ ունենք, որոնք ուսումնասիրում են. եթե անհանգստանալու առիթ կլինի, ապա արձագանքը կլինի համապատասխանաբար, բայց որեւէ մեկին արգելված չէ վարկ վերցնել:

Եթե մարդը բարձր աշխատավարձ ունի, կարող է վարկ վերցնել եւ իր կենցաղային հարցերը լուծել, բայց եթե կա դիրքի չարաշահում կամ կոռուպցիոն կասկած, դրա համար կան հետաքննող լրագրողներ, համապատասխան կառույցներ, որոնք հետաքրքրվում են, եւ եթե լինի փաստ, որ դա օրենքի խախտում է, ապա ցանկացած մարդ՝ սկսած վարչապետից, վերջացրած ցանկացած այլ պաշտոնյա, պետք է պատասխանատվության ենթարկվի:

Մենք երբեւէ չենք ասել, որ ապահովագրված ենք օրենքը չկատարելու հնարավորությունով: Ցանկացած մարդ իրավունք ունի կասկածներ հայտնելու, բայց որեւէ մեկն իրավունք չունի իր կասկածները որպես դատավճիռ ներկայացնի եւ ասի՝ տվյալ մարդը մեղավոր է:

Կասկածողը կարող է դիմել, որոշողն էլ որոշում է՝ այդ մարդը մեղավոր է, թե ոչ:

Բարձրաստիճան պաշտոնյաների անցուդարձը պետք է լինի հասարակության տեսադաշտում, կասկած հարուցող խնդիրները պետք է բարձրաձայնվեն, պատասխաններ պետք է տրվեն: Դա կստիպի նաեւ, որ պաշտոնյաները պատասխանատվությամբ վերաբերվեն իրենց անցուդարձին: Կարծում եմ, որ ընդդիմության գործառույթներից նաեւ պետք է լինի խոշորացույցի տակ պահել իշխանական լծակներին հասած անձանց եւ բարձրաձայնել նրանց վարքի հետ կապված կասկածների մասին, վերջում որոշել՝ փարատվեց կասկածը, թե խորացավ:

-Դուք՝ որպես իշխանության ներկայացուցիչ, այստեղ կոռուպցիոն ռիսկեր չե՞ք տեսնում:

-Ոչ: Ես, առանց փաստերի, ռիսկերի մասին չեմ կարող խոսել: Եթե ես չունեմ փաստ, միակ բանը, որ ես կարող եմ անել, համբերելն է, մինչեւ համապատասխան մարմինները հրապարակեն ուսումնասիրության արդյունքները: Ես մի բան գիտեմ՝ ոչ մեկին ի պաշտոնե արգելված չէ վարկ վերցնել. դա նորմալ է: Ես չեմ բացառում, որ կարող է լինել կոռուպցիոն դրսեւորում, որեւէ մեկը չի կարող դա բացառել, բայց դա պետք է ապացուցվի, ոչ թե ենթադրվի: Շատ կարեւոր է, որ մենք վստահ լինենք, որ կոռուպցիայի դրսեւորման դեպքում պատիժը կլինի անխուսափելի, բայց իմ խնդիրը չէ ասել՝ ռիսկ կա, թե ոչ: Եթե փաստ ունենամ, նոր կարող եմ այդ մասին խոսել:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԿՇԱՐՈՒՆԱԿԵՆ ՆՊԱՍՏԵԼ

ՊԱՏԱՍԽԱՆԵԼ ԵՆ ԹՈՎՄԱՍՅԱՆԻ ՆԱՄԱԿԻՆ

««Կշարունակեմ նպաստել Լաչինի միջանցքի եւ հնարավոր գերիների առնչությամբ Ստրասբուրգի դատարանի սահմանած ժամանակավոր միջոցների իրականացմանը». Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Մարիա Պեյչինովիչ Բուրիչը պատասխանել է իմ նամակին»,- հաղորդագրություն է տարածել ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը:

«Արդարադատության միջազգային դատարանի որոշման կապակցությամբ հրատապ գրություն էի ուղարկել միջազգային բոլոր գործընկերներիս: Ահազանգել էի, որ Ադրբեջանը չի կատարում դատարանի պահանջը, այն է՝ երաշխավորել Բերձորի միջանցքով երկու ուղղություններով քաղաքացիների, տրանսպորտային միջոցների եւ բեռների անխափան տեղաշարժը:

Եվս մեկ անգամ շեշտադրել էի, որ Ադրբեջանը ավելի քան 2 ամիս շարունակում է Արցախի 120.000 բնակչությանը պահել պատանդի կարգավիճակում գազի եւ էլեկտրաէներգիայի մատակարարման շարունակական խափանումների, ինչպես նաեւ սննդի, դեղորայքի, այլ կենսական կարիքների լրջագույն պակասի պայմաններում:

Միջազգային կառույցներին խնդրել էի իրենց մանդատի շրջանակներում նպաստել Արդարադատության միջազգային դատարանի կողմից կայացված՝ ժամանակավոր միջոցներ կիրառելու մասին որոշման կատարմանը եւ իրազեկել կատարված ու նախատեսվող քայլերի մասին:

Եվ, ահա, ստացել եմ պատասխան Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Մարիա Պեյչինովիչ Բուրիչից, որը հավաստիացնում է, որ օգտագործում է բոլոր հասանելի հնարավորությունները՝ վճռականորեն խրախուսելու Հայաստանին եւ Ադրբեջանին լիարժեքորեն հավատարիմ մնալ երկխոսությանը եւ առաջնահերթ լուծել կոնֆլիկտին առնչվող՝ մարդու իրավունքների եւ հումանիտար բոլոր առկա խնդիրները:

Այդ իմաստով տիկին Բուրիչը նշել է, որ կշարունակի նպաստել Լաչինի միջանցքի եւ հնարավոր գերիների առնչությամբ Ստրասբուրգի դատարանի սահմանած ժամանակավոր միջոցների իրականացմանը:

«Եվրոպայի խորհուրդը կշարունակի աջակցել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հաշտեցման ջանքերին կողմերի միջեւ վստահության կառուցման գործիքակազմով՝ նպատակ հետապնդելով հասնել կայուն խաղաղության տարածաշրջանում»,- եզրափակել է ԵԽ գլխավոր քարտուղարը:

Իմ կողմից հավելեմ, որ ՄԱԿ-ի հիմնական դատական մարմնի որոշումը ենթակա է պարտադիր կատարման, սակայն, ցավոք, այն չի կատարվել մինչ օրս»:

5 ՕՐՈՎ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանը եւ նույն նախարարության միասնական սոցիալական ծառայության պետ Էդուարդ Պետրոսյանը մարտի 5-9-ը կգործուղվեն Նյու Յորք: Նարեկ Մկրտչյանի եւ Էդուարդ Պետրոսյանի՝ Միավորված ազգերի կազմակերպության կանանց կարգավիճակի հարցերով հանձնաժողովի 67-րդ նստաշրջանին մասնակցելու նպատակով գործուղման գիշերավարձի եւ օրապահիկի ծախսերը կատարվելու են 2023 թվականի պետական բյուջեով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին: Նարեկ Մկրտչյանի՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ գործուղման ճանապարհածախսը կատարվելու է հրավիրող կողմի, իսկ Էդուարդ Պետրոսյանի գործուղման ճանապարհածախսը եւ օրապահիկի ծախսը՝ Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի միջոցների հաշվին:

ԱԺ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԵՏ

ԱԺ նախագահի գլխավորած պատվիրակությունը մարտի 11-15-ը կմեկնի Մանամա (Բահրեյնի Թագավորություն): ՀՀ ԱԺ պատվիրակությունը Մանամայում կմասնակցի Միջխորհրդարանական միության 146-րդ վեհաժողովին: ArmLur.am-ը տեղեկացավ, որ պատվիրակության կազմում են լինելու ՔՊ խմբակցության պատգամավորներ Հասմիկ Հակոբյանը, Ծովինար Վարդանյանը, պատվիրակության կազմում կլինի նաեւ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար Դավիթ Առաքելյանը: Պատվիրակության գործուղման հետ կապված ճանապարհածախսը, ներկայացուցչական ծախսերը, օրապահիկը եւ գիշերավարձը կկատարվեն պետբյուջեի հաշվին:

ՆՈՐ ԱՎԱՆ

Կառավարությունն այսօրվա նիստում հավանություն է տվել «Արագած» ներդրումային ծրագրին: Ծրագրով սկզբնական շրջանում նախատեսվում է հիմնել 300 փոքր ֆերմա, որտեղ կներգրավվեն երիտասարդ ընտանիքներ, կնախաձեռնվեն համապատասխան ուսուցման ծրագրեր, կկազմակերպվի ստացված օրգանական գյուղատնտեսական արտադրանքի իրացումը: Աշխատանքի դիմաց ֆերմերները ստանալու են աշխատավարձ: Ծրագրով նախատեսված է ամառային եւ ձմեռային հանգստավայրի կառուցում: Ներդրումային ծրագրի իրականացման արդյունքում կստեղծվի 1,112 նոր աշխատատեղ: Նախագծից տեղեկանում ենք, որ ծրագրի իրականացման դեպքում սկզբնական փուլում նախատեսվում է 236.797 արտաքին եւ 199.339 ներքին զբոսաշրջային մուտքերի ապահովում: Տեղեկացանք, որ ընկերությունը մտադրություն ունի առաջիկա հինգ տարիների ընթացքում իրականացնել մոտ 93 մլրդ ՀՀ դրամի չափով ներդրում: Նոր համալիրի ստեղծումը վերաբերելու է Վարդենուտ, Արագած, Արայի եւ Շենավան բնակավայրերին, կկառուցվի նաեւ 3 մլն խմ տարողությամբ ջրամբար, լեռնադահուկային համալիր՝ 5 ճոպանուղիների գծերով, մոտ 30 կմ սահուղիներով, հյուրանոցներով եւ այլն: Կառուցվելու է 25 հազար 260 քմ ճանապարհ եւ 104 հազար 920 քմ բակային ճանապարհ, ավտոկայանատեղիներ: Ընդհանուր ներդրումային ծավալը կազմելու է 190 մլն դոլար:

ՆՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Ադրբեջանը Հայաստանի դեմ արբիտրաժի ծանուցում է ներկայացրել Արդարադատության միջազգային դատարանի որոշումից մի քանի օր անց: Այդ որոշմամբ դատարանը պարտադրեց Ադրբեջանին «ապահովել մարդկանց, տրանսպորտային միջոցների եւ բեռների անարգել տեղաշարժը» Լեռնային Ղարաբաղի 120,000 էթնիկ հայերին արտաքին աշխարհին կապող միակ ճանապարհով: Ադրբեջանը անտեսեց Դատարանի պարտավորեցնող որոշումը եւ Էներգետիկ խարտիայի շրջանակներում վարույթ է հարուցում Հայաստանի դեմ:

Նշենք, որ նախօրեին Ադրբեջանը հայտնել է, որ միջպետական արբիտրաժային վարույթ է նախաձեռնում ընդդեմ Հայաստանի՝ «Երեւանից ֆինանսական փոխհատուցում պահանջելով իր տարածքում գտնվող էներգետիկ օբյեկտները 1991-ից 2020 թվականներին անօրինականորեն շահագործելու համար»:

Այստեղ ընդգծենք, որ Հայաստանի միջազգային իրավական հարցերով մշտական ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսյանն իր հանրային խոսքում մշտապես շեշտում է Հաագայի միջազգային դատարան դիմելու կարեւորությունը, Նիկոլ Փաշինյանի PR թիմն օրեր շարունակ ոգեւորված տարածում էր դատական լսումների տեղեկությունները՝ հասարակությանը կերակրելով, թե, ահա, միջազգային դատարանում քննվում է հայերի համար կարեւորագույն հարցը, եւ վճռից հետո Լաչինի միջանցքը կբացվի եւ այլն: Կյանքը ցույց տվեց, որ ինչպես մյուս բոլոր ոլորտներում, այս դեպքում էլ Նիկոլ Փաշինյանի իշխանությունը քամի տատանելով էր զբաղված: Նրանք ցույց են տալիս, թե գործում են, բայց գործում են իրականում զերո արդյունավետությամբ:

Ոչ միայն միջանցքը չի բացվում, այլ Հայաստանի դեմ գործերն են ավելանում:

ԳՈՐԾՈՒՂՈՒՄ՝ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՇՎԻՆ

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորներ Սիսակ Գաբրիելյանը, Հրաչյա Հակոբյանը եւ Ծովինար Վարդանյանը մարտի 16-19-ը կգործուղվեն Լիմասոլ (Կիպրոսի Հանրապետություն):

ArmLur.am-ը տեղեկացավ, որ իշխանական պատգամավորները Կիպրոսում կմասնակցեն Ուղղափառության միջխորհրդարանական վեհաժողովի (ՈՒՄՎ) Միջազգային քարտուղարության, հանձնաժողովների նախագահների եւ զեկուցողների նիստի աշխատանքներին:

Պատգամավորների գործուղման հետ կապված ծախսերը՝ ճանապարհածախսը, օրապահիկը եւ գիշերավարձը, կկատարվի պետբյուջեի հաշվին:

ԿՓՈԽՎԻ

ԹԱԳՈՒՀԻ ԹՈՎՄԱՍՅԱՆԻ ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾԸ

Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանը հանդես է եկել օրենսդրական նախաձեռնությամբ եւ առաջարկում է փոփոխություններ կատարել «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքում:

Բանն այն է, որ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ «Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով Պաշտպանի լիազորությունները դադարելու դեպքում, բացառությամբ ժամկետն ավարտվելու հիմքով Պաշտպանի լիազորությունների դադարման դեպքի, Պաշտպանի ընտրությունն անցկացվում է սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով հաղորդագրության հրապարակման օրվանից հետո՝ մեկ ամսվա ընթացքում:»:

Համաձայն «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 145-րդ հոդվածի՝

1. Գլխավոր դատախազի, Մարդու իրավունքների պաշտպանի, Հաշվեքննիչ պալատի նախագահի եւ մյուս անդամների, Կենտրոնական բանկի նախագահի, նրա տեղակալների եւ խորհրդի մյուս անդամների, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի եւ մյուս անդամների, Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովի անդամների ընտրությունն անցկացվում է համապատասխան պաշտոնատար անձի՝

1) լիազորությունների ավարտից ոչ շուտ, քան երեք ամիս առաջ, եւ ոչ ուշ, քան մեկ օր առաջ,

2) պաշտոնը թափուր մնալուց հետո՝ եռամսյա ժամկետում: (...):

Իսկ արդեն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 138-րդ հոդվածի համաձայն՝ «Եթե Ազգային ժողովը եռամսյա ժամկետում Սահմանադրության 174-րդ հոդվածի 3-րդ մասով, 177-րդ հոդվածի 1-ին մասով, 192-րդ հոդվածի 1-ին մասով, 195-րդ հոդվածի 2-րդ մասով, 197-րդ հոդվածի 2-րդ մասով, 199-րդ հոդվածի 2-րդ մասով եւ 201-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով չի ընտրում համապատասխան պաշտոնատար անձանց, ապա մինչեւ Ազգային ժողովի կողմից նրանց ընտրությունը Հանրապետության նախագահն օրենքով սահմանված հիմքերով եւ կարգով նշանակում է ժամանակավոր պաշտոնակատարներ»:

Վերոգրյալից հետեւում է, որ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի համաձայն՝ Պաշտպանի ընտրությունն անցկացվում է Պաշտպանի լիազորությունները վաղաժամկետ դադարելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, մինչդեռ ՀՀ Սահմանադրության եւ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի համաձայն՝ Մարդու իրավունքների պաշտպանի ընտրությունը տեղի է ունենում եռամսյա ժամկետում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ պատգամավորը գտնում է, որ առաջացել է անհրաժեշտություն կատարել համապատասխան փոփոխություն «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում:

Հիշեցնենք, որ Քրիստինե Գրիգորյանը այլ աշխատանքի անցնելու կապակցությամբ հունվարի 23-ին հրաժարականի դիմում էր ներկայացրել Ազգային ժողով. Հայաստանի Ազգային ժողովը հունվարի 24-ին ընդունել էր նրա հրաժարականը:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԸՆԴՈՒՆԵԼ Է ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ

Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանն ընդունել է Երեւանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանին:

Հանդիպման ընթացքում քաղաքապետը՝

-նախագահին է ներկայացրել Երեւանի քաղաքային տրանսպորտում եւ այլ ենթակառուցվածքներում առկա խնդիրներն ու դրանց լուծման ուղղությամբ տարվող աշխատանքներն ու ծրագրերը,

-մանրամասներ է հայտնել Աջափնյակի մետրոյի կայարանի կառուցման նախագծային եւ նախահաշվային աշխատանքների վերաբերյալ,

-անդրադարձ է կատարել ընթացիկ տարում քաղաքային ենթակառուցվածքներում նախատեսվող բարեփոխումների ծրագրերին եւ միջոցառումներին:

Նախագահ Վահագն Խաչատուրյանը պատրաստակամություն է հայտնել իր հնարավորությունների եւ լիազորությունների սահմաններում աջակցություն ցուցաբերել Երեւանի քաղաքապետարանի կողմից իրականացվող տարբեր ծրագրերին եւ բարեփոխումներին:

ՄԵԿՆԵԼ ԵՆ ԳԵՐՄԱՆԻԱ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը տիկնոջ՝ Աննա Հակոբյանի հետ մարտի 2-3-ին աշխատանքային այցով մեկնել է Գերմանիայի Դաշնային Հանրապետություն:

Այցի շրջանակում վարչապետը հանդիպում կունենա ԳԴՀ կանցլեր Օլաֆ Շոլցի հետ: Բանակցությունների ավարտից հետո ՀՀ վարչապետը եւ ԳԴՀ կանցլերը կհանդիպեն ԶԼՄ ներկայացուցիչներին՝ ամփոփելու հանդիպման արդյունքները:

Մարտի 2-ին Նիկոլ Փաշինյանը կայցելի Արտաքին հարաբերությունների գերմանական խորհուրդ:

Մարտի 3-ին նախատեսված է վարչապետ Փաշինյանի հանդիպումը ԳԴՀ նախագահ Ֆրանկ-Վալտեր Շտայնմայերի հետ:

Այցի շրջանակում տեղի կունենան մի շարք այլ հանդիպումներ եւս:

«ՊԵՏՔ Է ԲԱՑՎԻ»

Ադրբեջանը պետք է հարգի ՄԱԿ-ի Միջազգային դատարանի որոշումը, իսկ Լաչինի միջանցքը պետք է բացվի. այս մասին հայտարարել է Ֆրանսիայի ԱԳ նախարարը:

«Լաչինի միջանցքի արգելափակումն անընդունելի է, միջանցքի ապաշրջափակումն առաջնահերթություն է: Ազատ տեղաշարժն անհապաղ պետք է վերականգնվի. դա Ադրբեջանի պարտավորությունն է, օրենքը պետք է հարգվի: Մենք պատրաստ ենք օգնել ԵՄ-ի եւ ԱՄՆ-ի մեր գործընկերներին»,- ասել է նա:

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԲԱԶՄԱԴՐՎԱԳ ԽԱՐԴԱԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ավարտվել է բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահի կողմից խարդախությամբ խոշոր չափերով մի քանի դրվագ հափշտակություններ կատարելու դեպքերի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:

ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական առաջին բաժնում միացված վարույթով իրականացված քննությամբ պարզվել եւ հիմնավորվել է, որ «Արիս» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահը 2022թ. հունիսին ծանոթացել է հագուստի առքուվաճառքով զբաղվող մի ընկերության տնօրենի հետ եւ, ներկայանալով որպես բարեգործական հիմնադրամի նախագահ, հասարակության շրջանում հեղինակություն վայելող անձնավորություն, առաջարկել է նշված ընկերությանը պատկանող խանութից ձեռք բերել տարբեր տեսակի հագուստներ՝ գումարը հետագայում վճարելու պայմանով, ինչին ընկերության տնօրենը համաձայնել է: Չարաշահելով վերջինիս վստահությունը՝հետագայում գումարները վճարելու կեղծ խոստումներով նա խանութից վերցրել է 3.148.800 ՀՀ դրամի հագուստ, սակայն որեւէ վճարում չկատարելով՝ խաբեությամբ հափշտակել է դրանք՝ընկերությանը պատճառելով խոշոր չափերի գույքային վնաս:

Բացի այդ, հանդիսանալով հագուստի եւ ներքնազգեստի խանութների առքուվաճառքով զբաղվող ընկերության խանութների մշտական հաճախորդ, օգտագործելով բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ լինելու հանգամանքը, ծանոթ լինելով նշված ընկերության գլխավոր մենեջերի հետ՝նույն անձը վերջինիս մոտ առաջացրել է վստահություն եւ հետագայում գումարներ վճարելու կեղծ խոստումներով 2020թ. մայիս ամսվա ընթացքում ընկերությանը պատկանող խանութներից վերցրել է առանձնապես խոշոր չափերի՝ ընդհանուր 4.412.110 ՀՀ դրամ արժողության տարբեր տեսակի հագուստ, սակայն որեւէ վճարում չկատարելով՝նա խաբեությամբ հափշտակել է նշված հագուստները՝ ընկերությանը պատճառելով առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս:

Պարզվել է նաեւ, որ նշված անձը 2018թ. ամռանը ծանոթացել է Կոտայքի մարզի Ջովք գյուղի բնակչուհու հետ, ում հայտնել է, որ հանդիսանում է «Արիս» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ: Վերջինիս մոտ առաջացրել է վստահություն եւ, Շիրակի մարզի Բայանդուր գյուղում մկրտություն կատարելու համար արծաթյա շղթաներ, խաչեր եւ այլ իրեր տրամադրելու անհրաժեշտության ներկայացմամբ, հիմնադրամում բարեգործական ներդրումներ կատարած անձանց ոսկյա զարդեր նվիրելու կեղծ պատրվակով, հիշյալ բնակչուհու տանը վերջինիս վստահությունը չարաշահելու եւ խաբեության եղանակով նրանից ստացել ու հափշտակել է առանձնապես խոշոր չափերի՝ընդհանուր 3.713.000 ՀՀ դրամ արժողության տարբեր տեսակի ոսկյա զարդեր, արծաթյա խաչեր, շղթաներ եւ այլ իրեր, այդկերպ Ջովք գյուղի բնակչուհուն պատճառել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս:

Ձեռք բերված փաստերի հիման վրա՝ բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (համապատասխանում է գործող ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետին (2 դրվագ) եւ 255-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով: Նրա նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է կալանավորումը:

Քրեական վարույթի նախաքննության ընթացքում հիշյալ անձն իր կողմից պատճառված վնասից վերականգնել է 1 900 000 ՀՀ դրամը: Նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթի նյութերն ուղարկվել են դատարան:

ԽԱՐԴԱԽՈՒԹՅՈՒՆ

ԱԱԾ-Ն ՀԵՐԹԱԿԱՆ ԱՆԳԱՄ ԻՐԱԶԵԿՈՒՄ Է

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը դեռեւս ա.թ-ի հունվարի 27-ին ՀՀ ԱԱԾ դաշտոնական կայքում հաղորդագրություն էր հրապարակել, որտեղ քաղաքացիներին նախազգուշացրել էր համացանցում լայն տարածում գտած միջազգային չափանիշների խարդախության սխեմայի մասին:

ՀՀ ԱԱԾ տեղեկատվական անվտանգության եւ կառավարական կապի գլխավոր վարչության կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ չնայած ծառայության տարածած իրազեկող հաղորդագրությանը՝ խարդախության սխեմայի կազմակերպիչները համացանցում դեռեւս շարունակում են ՀՀ քաղաքացիներին «Գազպրոմ Հայաստան» ընկերության «արժեթղթերում» ֆինանսական փոքր ներդրումներ կատարելու եւ «գազի վաճառքով» զբաղվելու դիմաց իբրեւ թե մեծ եկամուտներ ստանալու վերաբերյալ տարբեր կայքերի եւ սոցիալական ցանցերի միջոցով իրականությանը չհամապատասխանող բովանդակությամբ տեսանյութերի տարածելու գործընթացը:

Պարզվել է նաեւ, որ խարդախության հեղինակները փոխել են իրենց մարտավարությունը եւ քաղաքացիների վստահությունը ձեռք բերելու համար, այս դեպքում որպես նախագծի հովանավորներ, հիշատակում են պետական պաշտոնատար անձանց, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի, նախագահի եւ Ազգային ժողովի նախագահի անունները:

Ազգային անվտանգության ծառայությունը քաղաքացիներին եւս մեկ անգամ կոչ է անում խուսափել եւ զերծ մնալ միջազգային չափանիշների խարդախության սխեմային մասնակցության ունենալու գայթակղությունից, ոչ պաշտոնական կայքերում հրապարակվող կասկածելի ծրագրերում ներդրում կատարելու առաջարկներից, ինչպես նաեւ չտրամադրել անձնական եւ բանկային հաշիվների վերաբերյալ տվյալներ ֆինանսական կորուստներից խուսափելու նպատակով:

ԼՈՒՐԵՐ

ՎԵՃ, ԿՐԱԿՈՑ, ՎՐԱԵՐԹ

Փետրվարի 23-ի գիշերը ոստիկանության Արաբկիրի բաժնում հաղորդում ստացվեց, որ Կոմիտասի պողոտայում կրակոցներ են հնչել: Ոստիներ անց բաժնում նոր հաղորդումներ ստացվեցին: Հայտնում էին, որ Կիեւյան փողոցում մի տղամարդ «Օպել»-ն անկանոն է վարում, վրաերթի ենթարկված անձինք կան: Հաջորդ ահազանգը «Արմենիա» բժշկական կենտրոնից էր. վրաերթի ենթարկված 25 եւ 90 տարեկան երկու կանայք տեղափոխվել են հիվանդանոց:

Դեպքի վայր մեկնեցին օպերատիվ-քննչական խմբեր:

Արաբկիրի բաժնի քրեական հետախույզները օպերատիվ միջոցառումների արդյունքում պարզեցին, որ Կիեւյան փողոցի ռեստորաններից մեկում մի խումբ անձինք վիճել էին, հայհոյել ու ծեծել իրար: Մասնակիցներից 26-ամյա մի երիտասարդ գազային ատրճանակից կրակել էր, ապա նստել «Օպել»-ն ու սկսել անկանոն վարել՝ այդ ընթացքում վրաերթի ենթարկելով երկու կանանց, նաեւ բախվել էր մի «Մերսեդես»-ի: Ըստ տեղեկությունների՝ նա վարելիս եւս ատրճանակից կրակել էր:

Ձեռնարկված միջոցառումների արդյունքում երիտասարդը հայտնաբերվել է: Նա կալանավորվել է: Դեպքի վայրի զննությամբ հայտնաբերվել է պարկուճ: Հանգամանքները պարզվում են Արաբկիրի քննչական բաժնում կատարվող նախաքննությամբ:

ԵՂԵԳՆԱՁՈՐՑԻՆ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵԼ Է

Փետրվարի 11-ին՝կեսգիշերին մոտ, «Եղեգնաձոր» բժշկական կենտրոնից ոստիկանության Եղեգնաձորի բաժին հաղորդում էր ստացվել, որ որովայնի եւ ազդրի կտրած-ծակած թափանցող վերքերով բուժօգնության են տեղափոխվել 32-ամյա 2 տղամարդ, երկուսն էլ՝Գետափ գյուղի բնակիչ:

Բաժնի քրեական հետախույզների օպերատիվ աշխատանքն արագ արդյունք տվեց: Նրանք հանցագործությունը բացահայտեցին ոստիկանության եւ քննչական կոմիտեի Վայոց ձորի մարզային վարչության գործընկերների հետ: Ձեռնարկված համալիր օպերատիվ-հետախուզական միջոցառումների եւ քննչական գործողությունների արդյունքում պարզվեց, որ գիշերը Եղեգնաձորի Միկոյան փողոցի խանութներից մեկում տուժածներից մեկը եւ 38-ամյա մի տղամարդ վիճել են: Միջադեպից մոտ 1 ժամ հետո նրանց միացել են այլ անձինք, եւ վիճաբանությունը շարունակվել էր Երեւան-Մեղրի ճանապարհին: 38-ամյա եղեգնաձորցին բուժօգնության դիմած տղամարդկանց դանակահարել էր ու դիմել փախուստի:

Նրա նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում: Նա կալանավորվել է: Հանգամանքները նախաքննությամբ պարզվում են:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝մարտի 1-ից 2-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտել են հանցագործության 55 դեպք, որոնցից 6-ը՝նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԻՍԵԼ ԵՆ

2022թ. սեպտեմբերի 25-ին կայացած Բերդ խոշոր համայնքի ավագանու համամասնական ընտրություններում հաղթեց Բերդ խոշոր համայնքի ղեկավար, 2012թ.-ից Բերդ համայնքը ղեկավարած Հարություն Մանուչարյանի «Ջորավոր համայնք» դաշինքը: Հ. Մանուչարյանը 2021 թվականի նոյեմբերի 7-ից իր հանդեպ հարուցված քրեական գործով գտնվում էր անազատության մեջ: Նա ավագանու ընտրություններից հետո ազատվեց կալանքից, սակայն շուրջ մեկ ամիս անց նորից կալանավորվեց: 2022թ. սեպտեմբերի 30-ից անազատության մեջ էր Բերդ խոշոր համայքի ղեկավարի տեղակալ Սամվել Հովսեփյանը: Ներկայումս ՀՀ հակակոռուպցիոն դատարանում քննվում է Հարություն Մանուչարյանի վերաբերյալ քրեական գործ, Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում քննվում է Հարություն Մանուչարյանի, Բերդ համայնքի ավագանու նախկին անդամ Սարգիս Մարգարյանի եւ Բերդ համայնքի Այգեպար համայնքի վարչական ղեկավար Արկադի Յամուկյանի վերաբերյալ քրեական գործ, որը վերաբերում է դատավոր Սամվել Մարդանյանի հասցեին դատական նիստի ժամանակ վիրավորական արտահայտություններ հնչեցնելուն: Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանում ընթանում է Բերդ խոշոր համայնքի ղեկավարի տեղակալ Սամվել Հովսեփյանի, Բերդի համայնքապետարանի աշխատակազմի ղեկավար Հասմիկ Մելիքյանի եւ Բերդ համայնքի Ներքին Կարմիրաղբյուր բնակավայրի վարչական ղեկավար Լեւոն Առաքելյանի վերաբերյալ քրական գործով դատաքննություն. նշված պաշտոնյաները մեղադրվում են Ներքին Կարմիրաղբյուրի մանկապարտեզի ղեկավարի պաշտոնակատարին նախընտրական քարոզչություն անելուն հարկադրելու համար: Հարություն Մանուչարյանին, Հասմիկ Մելիքյանին, Սամվել Հովսեփյանին քրեական գործերով կալանքի տակ պահելու, նրանց հանդեպ դատաքննություն սկսելու հետեւանքով Բերդ համայնքում 2022թ. սեպտեմբերի 25-ին կայացած ավագանու համամասնական ընտրություններում հաղթած «Ջորավոր համայնք» դաշինքը իշխանությունը ստիպված կիսել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հետ: 2022թ. նոյեմբերի 10-ին Բերդ համայնքի ղեկավար ընտրվեց «Ջորավոր համայնք» դաշինքի 3-րդ համար Աստղիկ Հակոբյանը: Նրա առաջին տեղակալ է նշանակվել ՔՊ կուսակցությունից Սեւակ Բաղալյանը, համայնքի ղեկավարի խորհրդական՝ ՔՊ-ական Արթուր Ծատուրյանը, համայնքի ղեկավարի օգնական՝ ՔՊ-ական Արսեն Ադամյանը: 2022թ. սեպտեմբերի 25-ին կայացած ավագանու ընտրություններում Բերդ համայնքի 4 գյուղերում՝ Տավուշում, Վարագավանում, Չինչինում եւ Նորաշենում, ՔՊ կուսակցությունն ավելի շատ քվեներ է ստացել: Այդ գյուղերի վարչական ղեկավարներ են նշանակվել ՔՊ կուսակցության թեկնածուները՝ Տավուշում՝ Արմեն Արզումանյանը, Չիչինում՝ Կարեն Դարբինյանը, Վարագավանում՝ Արմեն Աբրահամյանը, Նորաշենում՝ Գոռ Աբրահամյանը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԾՐԱԳՐԵՐ

ԿԱՏԵՍՏԱՎՈՐՎԵՆ ԵՒ ԼՐԱՎՃԱՐ ԿՏՐԱՄԱԴՐՎԻ

Կառավարությունն իր երեկվա՝ մարտի 2-ի նիստում հաստատեց պետական կամ համայնքային կազմակերպությունների արտադպրոցական ծրագրեր իրականացնող մանկավարժական աշխատողների կամավոր ատեստավորման եւ ՀՀ պետական բյուջեից լրավճարի տրամադրման կարգը:

Որոշման հիմնավորման մեջ նշվում է, որ նիշոցառման գլխավոր նպատակը արտադպրոցական ուսումնական հաստատության մարզիչ-մանկավարժի, խմբակավարի, դասատուի՝ ըստ մարզաձեւերի, ուղղությունների, առարկաների գիտելիքների իմացության աստիճանի գնահատումն ու դրա արդյունքում վերջինիս լրավճարի տրամադրումն է:

2021/2022 ուսումնական տարում երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներում եւ մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններում դասավանդել են 5099 ուսուցիչներ (76.8%-ը՝ կանայք), որոնց 42.6%-ն ունեցել է միջին մասնագիտական կրթություն:

Մանկապատանեկան մարզադպրոցներում մարզումներն իրականացրել են 2104 մարզիչ-մանկավարժներ, նրանցից 324-ը (15.4%-ը)՝ կանայք:

Մանկավարժների ցածր աշխատավարձը խոչընդոտում է նոր մասնագետների՝ համակարգ մուտք գործելուն:

Ներդրված կամավոր ատեստավորման համակարգի փորձնական ծրագիրը շարունակաբար կխրախուսի մանկավարժական աշխատողների մասնագիտական զարգացումը եւ լրավճարի տրամադրման միջոցով կնպաստի դասավանդման որակի եւ արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաեւ կխթանի արական սեռի մանկավարժների մուտքը արտադպրոցական ուսումնական հաստատություններ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ արտադպրոցական ուսումնական հաստատություններում դրույքաչափերը խիստ տարբեր են՝ ըստ տարբեր համայնքների՝ կախված համայնքների բյուջեներից, սահմանվում է ամրագրված լրավճար հետեւյալ տրամաբանությամբ՝

ատեստավորման 90-100 տոկոս արդյունք ցուցաբերելու դեպքում՝ 138.300 դրամ լրավճար՝ մեկ դրույք ծանրաբեռնվածության համար (հարկերը հանած՝ կկազմի 100 հազար դրամ):

Ատեստավորման 80-89 տոկոս արդյունք ցուցաբերելու դեպքում՝ 111.500 դրամ լրավճար՝ մեկ դրույք ծանրաբեռնվածության համար (հարկերը հանած՝ կկազմի 80 հազար դրամ):

Ատեստավորման 70-79 տոկոս արդյունք ցուցաբերելու դեպքում՝ 80.600 դրամ լրավճար՝ մեկ դրույք ծանրաբեռնվածության համար (հարկերը հանած՝ կկազմի 60 հազար դրամ):

Կամավոր ատեստավորումն անցկացվելու է նախապես կազմված ժամանակացույցին համապատասխան.

1) 2023 թվականից սկսած՝ ատեստավորումն իրականացվելու է մարզադպրոցներում դասավանդող ազատ ոճի եւ հունահռոմեական ըմբշամարտ, սամբո, ինչպես նաեւ ձյուդո մարզաձեւերի, ինչպես նաեւ արվեստի եւ երաժշտական դպրոցների դաշնամուրի եւ երաժշտության տեսության (սոլֆեջո եւ երաժշտական գրականություն) դասավանդող մանկավարժական աշխատողների համար:

2) 2024 թվականից սկսած՝ ատեստավորումն անցկացվելու է նաեւ մանկապատանեկան ստեղծագործական եւ գեղագիտական կենտրոններում, մշակույթի տներում դասավանդող մանկավարժական աշխատողների համար:

3) 2023 թվականից սկսած ատեստավորմանը կարող են մասնակցել նաեւ որեւէ հաստատությունում չաշխատող եւ մանկավարժական աշխատողի պահանջները բավարարող անձը, ով լրավճար կարող է ստանալ որեւէ հաստատությունում աշխատանքի ընդունվելու օրվանից: Լրավճարի տրամադրման հնգամյա ժամկետը հաշվարկվում է՝ ատեստավորումից սկսված:

Դիմումների ընդունումը կսկսվի մարտի 15-ից, դիմումներն ընդունվելու են էլեկտրոնային տարբերակով:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՈՎՔԵ՞Ր ԵՆ ԱՐՑԱԽԻ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

Արցախի եւ Ադրբեջանի ներկայացուցիչները երեկ եւս հանդիպել են՝ ռուսական կողմի միջնորդությամբ:

«Արցախպրես»-ը հայտնել է, որ խաղաղապահ զորախմբի հրամանատարի մասնակցությամբ եռակողմ հանդիպմանը քննարկվել է Լաչինի միջանցքով մեքենաների անխոչընդոտ անցումը վերականգնելու եւ միջանցքի նպատակային օգտագործման փաստը հաստատելու հարցը: Բացի այդ, հանդիպման շրջանակներում քննարկվել է Դրմբոնի եւ Կաշենի հանքավայրերում ադրբեջանական կողմի ներկայացուցիչների կողմից շրջակա միջավայրի մոնիտորինգի հնարավորությունը:

Հանդիպման մասին հաղորդում է նաեւ ադրբեջանական կողմը՝ մանրամասնելով, որ այն կայացել է Խոջալուում տեղակայված ռուսական խաղաղապահ զորակազմի շտաբում: «Հանդիպման ժամանակ նախնական քննարկումներ են անցկացվել Ղարաբաղյան շրջանում բնակվող հայերի՝ Ադրբեջանի Հանրապետությանը վերահնտեգրման շուրջ՝ Ադրբեջանի Հանրապետության Սահմանադրությանը եւ օրենքներին համապատասխան»,- հաղորդում է APA լրատվական գործակալությունը՝ հավելելով, որ շփումները կշարունակվեն:

Նույն աղբյուրի փոխանցմամբ՝ Ղարաբաղում բնակվող հայերի հետ շփումների պատասխանատու է նշանակվել Միլի մեջլիսի պատգամավոր Ռամին Մամեդովը, որն էլ բնական պաշարների ապօրինի շահագործումը հետաքննող մոնիտորինգային խմբի ղեկավար Մասիմ Մամեդովի եւ այլ պաշտոնյաների հետ մասնակցել է հանդիպմանը:

Արցախից Ադրբեջանի հետ բանակցող են նշանակվել Արցախի ԱԽ քարտուղար Սամվել Շահրամանյանն ու ռուսական խաղաղապահ զորախմբի հետ համագործակցության ապահովման կենտրոնի տնօրեն Սերգեյ Մարտիրոսյանը:

Ադրբեջանի Միլի մեջլիսի պատգամավոր Ռամին Մամեդովը, ըստ ադրբեջանական լրատվամիջոցների, ծնվել է Մարտակերտում, սովորել է Շուշիի դպրոցում:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 9 ՃՏՊ. 12 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՍՏԱՏՎԵՑ

ԿՋԲԱՂՎԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ

Կառավարությունն իր մարտի 2-ի նիստում հաստատեց Պետական հանրակրթական ուսումնական հաստատության վարչատնտեսական մասի համակարգողի նշանակման կարգը:

Միջոցառման գլխավոր նպատակը, հանրակրթական ուսումնական հաստատությունների կառավարման գործընթացում առավել ճկուն եւ արդյունավետ մոտեցումների ամրագրման պահանջով պայմանավորված, դպրոցի կառավարման գործընթացի վարչատնտեսական մասի համակարգողի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման եւ նշանակման գործընթացի պատշաճ կազմակերպումն է:

Որոշման հիմնավորման մեջ, մասնավորապես, նշվում է. «ՀՀ ուսումնական հաստատություններում ուսումնական եւ վարչատնտեսական ուղղությունները ղեկավարում է դպրոցի տնօրենը: Դպրոցը ունի տնօրենի տնտեսական աշխատանքերի գծով տեղակալի եւ հաշվապահի հաստիքներ, որոնք կատարում են իրենց աշխատանքը տնօրենի վերահսկողությամբ, եւ բոլոր գործընթացներին մասնակցում է տնօրենը: Ֆինանսատնտեսական, վարչական եւ տնտեսական աշխատանքները տնօրենից մեծ ժամանակ են խլում, եւ տնօրենը հնարավորություն չունի լիարժեք կազմակերպել, գնահատել եւ վերահսկել ուսումնական գործընթացը դպրոցում: Ստացվում է, որ ունենք տնօրեն, որ տնտեսական աշխատանքների գծով տեղակալի եւ հաշվապահի հետ իրականացնում է վարչատնտեսական աշխատանքները եւ ուսումնական աշխատանքների գծով տեղակալի հետ իրականացնում է ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերումը եւ վերահսկողությունը: Արդյունքում տնօրենը ավելի շատ աշխատանք է տանում վարչատնտեսական բաղադրիչում, եւ ուսումնական մասը, որն ավելի ծավալուն է, իրականացնում է մնացած ժամանակահատվածում:

Առաջարկվող մոդելում ունենում ենք վարչատնտեսական մասի համակարգող, որն ինքնուրույն է իրականացնում դպրոցի կառավարումը՝ վարչական, տնտեսական եւ ֆինանսական մասով: Ուսումնական մասի տնօրենը չի զբաղվում վարչական, տնտեսական եւ ֆինանսական հարցերով: Նա զբաղվում է մանկավարժական աշխատողների մրցույթի կազմակերպմամբ, ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորմամբ եւ իրականացմամբ:

Ուսումնական հաստատություններում կառավարումը ուսումնադաստիարակչական գծով գործադիր մարմնի եւ վարչատնտեսական մասի համակարգողի միջեւ տարանջատելու արդյունքում ակնկալվում է արհեստավարժ եւ արդյունավետ կառավարում՝ գործառույթների եւ պատասխանատվության հստակ բաշխմամբ: Մրցութային կարգով այն իրականացնելու դեպքում հնարավոր կլինի խուսափել մի շարք ռիսկերից, այդ թվում՝ համակարգին եւ պաշտոնային պարտականություններին ոչ իրազեկ մարդկանց ներգրավման առումով:

ՈՐՈՇՈՒՄ

ԵՒՍ 8 ԱՄԻՍ ԿՍՏԱՆԱՆ 68 ՀԱԶԱՐ ԴՐԱՄՆԵՐԸ

Կառավարությունն իր մարտի 2-ի նիստում որոշում կայացրեց, որով առաջարկվում է Ադրբեջանի վերահսկողության տակ անցնելու պատճառով Սյունիքի մարզի Շուռնուխ եւ Որոտան բնակավայրերում հաշվառված կամ այդ հասցեում փաստացի բնակված, Հայաստանի բնակության այլ վայրի հասցեում հաշվառված բնակելի անշարժ գույքը կորցրած այն քաղաքացիներին, որոնք դրամական աջակցության ծրագրի շրջանակներում ստացել են միանվագ աջակցություն՝ 300 000 դրամ, իսկ 2021 թվականի փետրվար ամսից մինչեւ 2022 թվականի նոյեմբեր ամիսը ներառյալ՝ ամսական 68 000 դրամ, ամսական աջակցությունը տրամադրել եւս 8 ամիս՝ 2022 թվականի դեկտեմբեր ամսից մինչեւ 2023 թվականի հուլիս ամիսը ներառյալ:

Խնդիրն այն է, որ Շուռնուխ բնակավայրում բնակելի թաղամասի կառուցման աշխատանքների կատարման վերջնաժամկետ էր սահմանվել 2022 թվականի սեպտեմբերի 30-ը, սակայն նշված ժամկետում պայմանագրով նախատեսված աշխատանքներն ամբողջ ծավալով չեն իրականացվել, եւ, կառավարության՝ 2022 թվականի դեկտեմբերի 1-ի որոշմամբ, աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել 2023 թվականի հունիսի 30-ը:

Նախագծով նախատեսվում է հստակեցնել միջոցառման շահառուների կազմը, եւ այն դեպքում, երբ լրացուցիչ ուսումնասիրությամբ պարզվի, որ 2021-2022 թվականի ընթացքում աջակցություն ստացած անձը չի հանդիսանում միջոցառման շահառու, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի տրամադրած տվյալների հիման վրա նրան աջակցությունը 2022 թվականի դեկտեմբեր ամսից մինչեւ 2023 թվականի հուլիս ամիսների համար չի վճարվի:

«Ըստ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանից 16.12.2022 N01/09/08897-2022 գրությամբ ստացված տվյալների՝ 16.12.2021 դրությամբ աջակցության շահառուների ցուցակում ընդգրկված է 38 անձ, որից մեկը շահառու ընտանիքում 19.10.2022 ծնված երեխա է: Ըստ այդմ, որոշման N 1 հավելվածի 2-րդ կետի համաձայն՝ 1 երեխայի համար պետք է վճարվի նաեւ միանվագ դրամական աջակցություն՝ 300000 դրամ, եւ ամսական օգնություն՝ հոկտեմբեր ամսից սկսած:

Նախագծի ընդունման դեպքում ծրագրում ընդգրկված՝ 2022 թվականի հունվար-նոյեմբեր ամիսների համար օգնություն ստացած 37 անձի համար ութ ամսվա ընթացքում անհրաժեշտ կլինի 20,128.0 հազ դրամ գումար (37 x 8 x 68000=20,128.0 հազար դրամ):

Հաշվի առնելով, որ որոշման N 1 հավելվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ դրամական աջակցությունը նոր ծնված երեխաների համար վճարվում է՝ ծննդյան ամսվանից սկսած, ըստ այդմ, 2022 թվականի հոկտեմբերի 19-ին ծնված մեկ երեխայի համար անհրաժեշտ կլինի հատկացնել 980.0 հազ դրամ գումար (1x10 x 68000+300000=980.0 հազար դրամ):

Այսպիսով, նախագծի ընդունման դեպքում ծրագրի ֆինանսավորման համար անհրաժեշտ կլինի 21,108.0 հազ. դրամ, որն առաջարկվում է հատկացնել Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեով նախատեսված կառավարության պահուստային ֆոնդից»,- ասվում է նախագծի հիմնավորման մեջ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԱԿԲԱ»-Ն ԿՏԵՂԱԲԱՇԽԻ ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐ

«Ակբա» բանկը 2023 թվականի մարտի 1-ից մինչեւ 2023 թվականի մայիսի 31-ը ներառյալ հրապարակային առաջարկով տեղաբաշխում է 5.000.000 (հինգ միլիոն) ԱՄՆ դոլար եւ 3.000.000.000 (երեք միլիարդ) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով, տարեկան համապատասխանաբար 5% եւ 11.50% եկամտաբերությամբ արժեկտրոնային ոչ փաստաթղթային պարտատոմսեր: Շրջանառության ժամկետը 36 ամիս է:

ՀՀ դրամի դեպքում մեկ պարտատոմսի անվանական արժեքը կազմում է 100.000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ, իսկ ԱՄՆ դոլարի դեպքում՝ 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար:

Պարտատոմսերի ձեռք բերման համար ներդրողները պետք է լրացնեն եւ «Ակբա» բանկ ներկայացնեն պարտատոմսերի ձեռք բերման հայտեր:

Պարտատոմսերի ձեռք բերման հայտ ֆիզիկական անձանց համար՝

- դրամային պարտատոմսերի ձեռք բերման հայտ,
- դոլարային պարտատոմսերի ձեռք բերման հայտ:

Պարտատոմսերի ձեռք բերման հայտ իրավաբանական անձանց համար՝

- դրամային պարտատոմսերի ձեռք բերման հայտ,
- դոլարային պարտատոմսերի ձեռք բերման հայտ:

«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ բանկի թողարկած անվանական պարտատոմսերով ներգրավված դրամական միջոցները համարվում են երաշխավորված բանկային ավանդ եւ երաշխավորված են Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾ

Ոգեշնչված գործարար կանանցով. «Ակբա» բանկը Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի հետ մեկնարկել է ֆինանսական աջակցության նոր նախագիծ, որի նպատակն է ամրապնդել բիզնեսում կին գործարարների ներգրավվածությունը:

«Մենք կարծում ենք, որ երկրի մակարդակով ունենք շատ մեծ պահուստային պոտենցիալ: Պետք է խրախուսել կանանց, օժանդակել, ցույց տալ որոշակի հնարավորություններ եւ այդ հնարավորություններից օգտվելու եղանակը: «Ակբա» բանկն իր միջոցառումների շարքով, բոլոր գործողություններով փորձում է այդ ամենը իրականություն դարձնել»,- նշել է «Ակբա» բանկի բիզնես գործառույթների համակարգման գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ Արսեն Մելքոնյանը:

«ՎՋԵԲ-ը կարեւորում է գենդերային հավասարությունն անցումային գործընթացում, եւ հենց մեզ մոտ էլ ղեկավար պաշտոններում շատ են կանայք: ՎՋԵԲ-ը ձգտում է աջակցություն տրամադրել կանանց կողմից կառավարվող փոքր ու միջին ձեռներեցությանը, որպեսզի նրանք կարողանան տնտեսական աճ ապահովել, ստեղծել աշխատատեղեր, զարգացնել իրենց հմտությունները, եւ հենց այս նպատակով սկսեցինք աջակցության «Կանայք՝ բիզնեսում» ծրագիրը»,- նշել է Վերակառուցման եւ զՋարգացման եվրոպական բանկի գրասենյակի ղեկավար Ջորջ Ախալկացին:

«Կանայք՝ բիզնեսում» ծրագրի ֆինանսավորման պայմաններին կարող եք ծանոթանալ՝ այցելելով մեր պաշտոնական կայքէջ:

«Կանայք՝ բիզնեսում» ծրագրի շրջանակում փոքր եւ միջին ձեռնարկությունների կին ղեկավարների համար կիրականացվեն նաեւ մենթորինգ, բիզնես դասընթացներ, խորհրդատվություն բիզնեսում կանանց ոգեշնչելու եւ նոր գաղափարներ իրագործելու նպատակով:

Բանկը վերահկսվում է ՀՀ ԿԲ կողմից:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՍԵՐ

ՆՈՐ ՊՐԵՄԻԵՐԱ՝ «ԽՈՍԻ՛Ր ԻՆՁ ՀԵՏ»

Վանաձորի Հովհաննես Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնի բեմ է բարձրացել «Խոսի՛ր ինձ հետ» ներկայացումը, որի ռեժիսորն Ալյոնա Ջավուկցյանն է:

Բեմադրության հիմքում ճապոնացի հեղինակ Բեցույակու Մինորուի «Հարյուր ենթավճար» ստեղծագործությունն է, որը գրվել է 2000 թվականին:

Ջավուկցյանը խոստովանում է՝ դժվարությամբ է կանգ առել այդ պիեսի վրա: «Ինչպես ցանկացած ռեժիսոր, ես եւս կարդացել եմ մի շարք ստեղծագործություններ՝ ինձ հուզող հարցերի մասին մտածելով եւ նպատակ ունենալով բեմադրել այնպիսի գործ, որը Հայաստանում չի բեմադրվել: Պատահաբար հանդիպեցի «Հարյուր ենթավճար» ստեղծագործությանը: Երբ այն մի քանի անգամ կարդալու ցանկություն առաջացավ, հասկացա, որ դա այն է, ինչ ինձ պետք է»,-ասում է ներկայացման ռեժիսորը:

Մինչ այդ գործին անդրադառնալը Ալյոնա Ջավուկցյանը այնքան էլ ծանոթ չի եղել ճապոնական գրականությանը: Ընթերցելով՝ որոշել է հայ հանդիսատեսին եւս ծանոթացնել ճապոնացի ստեղծագործողներին, ճապոնական մշակույթին:

Ներկայացման գլխավոր հերոսներին մարմնավորում են Մարիամ Ղեւոնդյանն ու Արման Սաքանյանը:

«Վանաձորի թատրոնն ինձ հարազատ է, եւ ես ծանոթ էի դերասաններին, գիտեի նրանց ներուժը, իսկ բեմադրական աշխատանքներն ընթացել են բավականին հարթ, թեեւ ընթացքում ունեցել ենք ստեղծագործական բանավեճեր, որոնք շատ հետաքրքիր էին: Դերասանները շատ մտածող են, եւ ցանկացած միտք առաջադրելիս պետք է նրանց համոզեի, թե ինչու հենց այդ միտքը, ինչու այսպես պիտի բեմադրվի եւ այլն: Ի վերջո, ստացել ենք ներկայացման վերջնական տեսքը»,- նշում է ռեժիսորը:

Նրա խոսքով՝ «Խոսի՛ր ինձ հետ» ներկայացումը միայնակ մարդկանց մասին է, միայնակ կնոջ եւ տղամարդու, որոնք հավաքական կերպարներ են: «Հանդիսատեսն իրեն տեսնելու է թե՛ տղամարդու, թե՛ կնոջ մեջ: Մեզնից յուրաքանչյուրն այս կերպարների մեջ հարազատ շունչ է զգալու: Միայնակ մարդիկ, որոնք հայտնվել են նույն վայրում նույն նպատակով՝ կախվելու համար: Նրանք ընթացքում սկսում են բացահայտել իրենց նախապատմությունը՝ ով ինչ խնդիրներ ունի եւ ինչն է իրեն հասցրել այդ կետին: Շեշտը դրված է սիրո վրա: Հերոսները սիրահարվում են, փորձում են օգնել միմյանց, հասկանալ՝ ինչու են ուզում կախվել, ինչու հենց հիմա, եւ արդյոք ոչինչ իրենց հետ չի պահի այդ մտքից եւ այլն: Ուշագրավն այն է, որ ներկայացման ավարտը բաց է, որովհետեւ հանդիսատեսն ինքն է որոշում՝ արդյոք հերոսներն ի վերջո կախվում են, թե ոչ»,-պատմում է ռեժիսորն ու հավելում՝ թատերասերները դրաման բավականին թեթեւ են դիտելու, որովհետեւ կա մի փոքր լույս, որն անընդհատ հիշեցնելու է, որ ոչինչ վերջ չունի, քանի դեռ կա ընտրության հնարավորություն:

ԼՈՒՐԵՐ

ՄԱԴՈՆՆԱՅԻ ՆՈՐ ԸՆԿԵՐԸ

Ընդամենը մի քանի օր է անցել այն օրվանից, երբ ցանցում հայտնվեց տեղեկություն այն մասին, որ 64-ամյա փոփ թագուհին բաժանվել է 23-ամյա մոդելավորող Էնդրյու Դարնելից: Մադոննան նրանցից չէ, ով կտանջվի նախկին ընկերոջ համար: Պարզվում է՝ երգչուհին գրեթե անմիջապես մխիթարություն է գտել մեկ այլ երիտասարդի գրկում: Աստղն այժմ հանդիպում է բռնցքամարտիկ Ջոշ Պոպերի հետ:

Երգչուհու ընտրյալի մասին քիչ բան է հայտնի: Նա 35 տարեկան է եւ ղեկավարում է Մանհեթենի Bredwinners մարզասրահը: Նախկինում Ջոշը եղել է ոչ այնքան հաջողակ ֆուտբոլիստ: Մի քանի անգամ նա նույնիսկ փորձել է մտնել ֆուտբոլի ազգային լիգա, սակայն չի անցել ընտրությունը: Այժմ մարզիկը պարապում է երգչուհու երեխաների հետ, եւ հնարավոր է, որ հենց իր հետ նույնպես:

Ի դեպ, Մադոննան իր Instagram-ում փետրվարի վերջին լուսանկար էր հրապարակել իր նոր սիրելիի հետ, սակայն գրեթե անմիջապես ջնջել է այն: Այդուհանդերձ, նկարում փոփ թագուհին շատ ջերմորեն գրկախառնված էր մի մարզիկի հետ: Սակայն Ջոշն իր պրոֆիլում լուսանկար է տեղադրել սիրելիի հետ: Ո՛չ տղան, ո՛չ երգչուհին դեռեւս չեն մեկնաբանել այս լուրը, բայց նկարն ամեն ինչ պարզ է դարձնում:

ԼՈՒՐԵՐ

ԴԵՐԱՍԱՆԸ ՀՈՍՊԻՏԱԼԱՑՎԵԼ Է

Դերասան, ՌԴ վաստակավոր արտիստ Գեորգի Մարտիրոսյանը հայտնվել է Մոսկվայի հիվանդանոցներից մեկում. այս մասին հայտնում է gazeta.ru-ն՝ 112 թելեգրամյան ալիքին հղումով:

Աղբյուրի տվյալներով՝ դերասանի մոտ բորբոքային պրոցեսներ են սկսվել: 75-ամյա Մարտիրոսյանն այս պահին համալիր ուրոլոգիական հետազոտություն է անցնում: Դերասանը հանդիսատեսին հայտնի է այնպիսի կինոնախագծերում իր դերերով, ինչպիսիք են «Վորոշիլովյան հրաձիգը», «Ռանետկի», «Վորոնինները», «Կրեմլի կադետները»: 1998թ.-ից Մարտիրոսյանը խաղում է «Ժամանակակից պիեսի դպրոց» թատրոնում:

ԳՆԵԼ Է 35 ՈՍԿԵ iPhone

Լիոնել Մեսսին Արգենտինայի հավաքականի խաղացողների համար գնել է 35 ոսկե iPhone:

«Պատիվ էր Լեո Մեսսիին հանձնել 35 ոսկե iPhone 14-ները: Նա դրանք պատվիրել է թիմակիցների ու մարզչական շտաբի համար՝ որպես նվեր աշխարհի առաջնության եզրափակիչում հաղթելու համար»: Յուրաքանչյուր iPhone-ի հետեւի մասում գրված են Արգենտինայի ֆուտբոլի ազգային հավաքականի ֆուտբոլիստների անուններն ու խաղային համարները: «Լիոնելը ոչ միայն բոլոր ժամանակների լավագույն խաղացողն է, այլ նաեւ Indesign Gold-ի ամենահավատարիմ հաճախորդներից մեկը: Նա կապվեց մեզ հետ աշխարհի առաջնության եզրափակչից մի քանի ամիս անց: Նա ասաց, որ կցանկանար յուրահատուկ նվեր անել բոլոր խաղացողներին ու մարզչական շտաբին՝ իրենց գեղեցիկ հաղթանակը տոնելու համար, սակայն չցանկացավ ժամացույցի նման սովորական բան նվիրել: Ես առաջարկեցի ոսկյա iPhone-ներ, եւ Լեոյին այդ գաղափարը դուր եկավ»,- ասել է Լիոնը The Sun-ին տված հարցազրույցում: Ըստ The Sun-ի՝ Մեսսին այս iPhone-ների վրա ծախսել է մոտ 175 հազար ֆունտ (գրեթե 200 հազար եվրո):

ԼՈՒՐԵՐ

ՇԱՏ ԳՈՀ Է ԽԱՂԻ ՈՐԱԿԻՑ

Անգլիայի Պրեմիեր լիգայի առաջատար Լոնդոնի «Արսենալի» իսպանացի գլխավոր մարզիչ Միկել Արտետան մեկնաբանել է 4:0 հաշվով հաղթանակը Լիվերպուլի «Էվերտոնի» նկատմամբ Անգլիայի առաջնության 7-րդ տուրից տեղափոխված խաղում:

«Շատ գոհ եմ արդյունքից, առաջին 25 րոպեներին լավ խաղացինք: Հետո որոշ դժվարություններ ունեցանք, «Էվերտոնի» դեմ խաղալը բարդ է: Հենց խփեցինք առաջին գոլը, խաղը բացվեց: Մեզ մի փոքր մոգություն էր պետք, եւ Բուկայո Սական արեց դա: Հետո ավելի մեծացրինք առավելությունը եւ արժանի հաղթանակի հասանք:

Երկրորդ խաղակեսում, իսկապես, շատ լավ խաղացինք եւ կարող էինք ավելի շատ խփել: Շատ գոհ եմ մեր խաղի հասունությունից եւ որակից»,- Արտետայի խոսքը մեջբերում է Goal.com-ը:

25 խաղից հետո «Արսենալը» 60 միավորով գլխավորում է մրցաշարային աղյուսակը եւ 5 միավոր առաջ է երկրորդ տեղում գտնվող չեմպիոն «Մանչեսթեր Սիթիից»: «Էվերտոնը» 18-րդն է՝ 21 միավոր:

● *Մարտի 4-ին Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոնում տեղի կունենա ներկայացում՝ «44 աստիճանի վրա»: Տոմսերի արժեքը՝ 1500-2500 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ

ՀԱՐՑ. Ես ուզում եմ կատարել իմ կենսաթոշակի վերահաշվարկ: Խնդրում եմ ասել՝ դրա համար ինչ է անհրաժեշտ, որ դեպքում է կենսաթոշակը վերահաշվարկվում:

Լյուդմիլա Ներսիսյան (64 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Տեղեկացնում ենք, որ աշխատանքային կենսաթոշակը վերահաշվարկվում է, եթե՝

1) փոխվել է հիմնական կենսաթոշակի չափը կամ աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը տվյալ ամսվա 1-ից,

2) տարիքային կամ հաշմանդամության կենսաթոշակ նշանակելուց (կենսաթոշակը կենսաթոշակառուի գրավոր դիմումի հիման վրա վերահաշվարկելուց) 12 ամիս հետո կենսաթոշակառուն ներկայացրել է կենսաթոշակը նշանակելուց (կենսաթոշակը կենսաթոշակառուի գրավոր դիմումի հիման վրա վերահաշվարկելուց) հետո առնվազն վեց ամիս աշխատած լինելու մասին տեղեկանք՝ դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու ամսին հաջորդող ամսվա 1-ից,

3) կենսաթոշակառուն ներկայացրել է մինչեւ կենսաթոշակ նշանակելը (կենսաթոշակի տեսակը փոխելը) ընկած ժամանակահատվածում իր կամ մահացած կերակրողի աշխատանքային կամ մինչեւ տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքն ընկած ժամանակահատվածի այլ գործունեության վերաբերյալ լրացուցիչ փաստաթղթեր՝ դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու ամսին հաջորդող ամսվա 1-ից,

4) հաշմանդամության կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող կենսաթոշակառուն մինչեւ տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրանալը՝ կենսաթոշակը նշանակելուց 2 ամիս հետո, ներկայացրել է այլ գործունեության ժամանակահատվածի մասին փաստաթուղթ դիմումը եւ այդ փաստաթուղթը ներկայացնելու ամսին հաջորդող ամսվա 1-ից:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ կենսաթոշակը վերահաշվարկվում է նաեւ՝

1) հաշմանդամության խումբը փոխվելու դեպքում՝ նոր հաշմանդամության խումբ սահմանելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից,

2) կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող երեխայի կամ առկա ուսուցմամբ սովորող զավակի մյուս ծնողի մահանալու դեպքում՝ նրա մահվան օրվանից, եթե դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվել են այդ օրվանից հետո՝ 6 ամսվա ընթացքում, իսկ այդ ժամկետից հետո դիմելու դեպքում՝ դիմելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Հետաքրքիր է իմանալ՝ ովքեր կարող են օտարերկրացուն Հայաստան այցելելու հրավեր տալ: Եվ խնդրում եմ ասել՝ որոնք են Հայաստան մուտքի վիզայի տեսակները:

Արմինե Մխոյան (43 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Տեղեկացնում ենք, որ օտարերկրացուն Հայաստան այցելելու հրավեր կարող են տալ՝

ա) Հայաստանում բնակվող ՀՀ քաղաքացին,

բ) Հայաստանում կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացին,

գ) Հայաստանում գրանցված իրավաբանական անձինք,

դ) ՀՀ պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, Հայաստանում հավատարմագրված դեսպանությունները, հյուպատոսական հիմնարկները եւ միջազգային կազմակերպությունները:

Հայտնում ենք, որ Հայաստան մուտքի վիզայի տեսակներն են՝

ա) այցելության մուտքի վիզա՝ հարազատներին այցելելու, զբոսաշրջության, կրթական հաստատություններում ուսանելու, տարբեր միջոցառումներին մասնակցելու նպատակով այցելության համար,

բ) պաշտոնական մուտքի վիզա՝ պաշտոնական անձնագիր կրող անձանց կամ սովորական անձնագրերով պաշտոնական պատվիրակությունների անդամների համար,

գ) դիվանագիտական մուտքի վիզա՝ դիվանագիտական անձնագիր կրող կամ դիվանագիտական կարգավիճակ ունեցող անձանց համար,

դ) տարանցիկ մուտքի վիզա՝ Հայաստանի տարածքով երթեւեկողների համար:

ՀՀ միգրացիոն պետական ծառայություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Տեղեկացնենք, որ հրավերը պետք է պարունակի հրավիրողի եւ հրավիրողի տվյալները, հրավերի նպատակը, հրավիրվողի՝ Հայաստանում մնալու ժամկետները:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Սեւանի Վ. Սարգսյանի անվան երաժշտական դպրոցի շեփորի 4-րդ դասարանի սան Արտյոմ Ավետիսյանը, մասնակցելով «Երաժշտություն՝ հանուն ապագայի» 2022-2023 թվականների կրթական եւ զարգացման ծրագրի մրցույթին, դարձել է հաղթող եւ նույն հիմնադրամի կրթաթոշակառու:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **2.03.2023**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: